ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ
(ԱԻ)
ԺԱ ԴԱՐՈՒՄ ՇԻՐՎԱՆՇԱՀԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԻՐԱՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Արևելյան Այսրկովկասում պարսկերենով մշակութային հաղորդակցության ավանդույթը գոյություն է ունեցել առնվազն դեռ միջին սասանյան ժամանակաշրջանից (Ե-Զ դդ): Ըստ հայ և վրաց մատենագրության պահպանված տվյալների՝ պարսկերենը հանդես էր գալիս որպես տեղական ազնվականության, պետական ծառայողների և կրթյալ դասի հաղորդակցության (առավելապես բանավոր մակարդակում՝ մայրենի լեզվին զուգահեռ) լեզու թե՛ Հայաստանում ու Վրաստանում և թե՛ Աղվանքում: Միաժամանակ այս ժամանակաշրջանում էր, որ համաձայն աղբյուրների վկայության՝ Բուն Աղվանքի արևելյան հատվածում՝ Կուրից մինչև Դերբենդի լեռնանցքը, առաջացան մի շարք տարածքային միավորներ, որոնց տիրակալներին սասանյան շահնշահեր Հազկերտ Բ-ի (439-457) և Խոսրով Անուշիրվանի (531-579) կողմից շնորհվեցին «շահի», այսինքն՝ «արքայի» տիտղոսներ (իհարկե տեղական իշխանի նշանակությամբ)՝ Կովկասի լեռնային ամրությունների ուժեղացման նպատակով[1]: Անկասկած, այդ տիտղոսների շնորհումը որևէ էթնո-տարածքային միավորի, այդ թվում նաև՝ Շիրվանի (ըստ ամենայնի՝ որպես «ճիղբք» ցեղաերկրանվան իրականացված ձևի)[2] նկատմամբ որոշակի տոհմի ժառանգական իրավունքի հաստատում պիտի նշանակեր: Եվ պատահական չէ, որ Շիրվանի՝ որպես առանձին տարածքի և Շիրվանշահերի՝ որպես այդ տարածքի իշխանների դինաստիայի սկզբնավորումն ավանդաբար հենց այս ժամանակաշրջանից է թվագրվում[3]:

Սակայն Շիրվանի տիրակալների արքայական այս առաջին հարստության վերաբերյալ աղբյուրների հաղորդած տեղեկությունները, որոնք մասնավորապես արաբ հեղինակները գրի են առել երկու-երեք դար հետո, մեզ ավելին չեն ասում: Մուղ են նաև տեղի ազնվականության մասին արաբական արշավանքների առաջին երկու դարերին վերաբերող տվյալները: Այս առումով հետաքրքրական է Ժ դարի պատմիչ Տաբարիի հաղորդած մի տեղեկություն: Ըստ դրա՝ երբ 643թ. Օմար խալիֆայի կողմից Դերբենդը գրավելու հրաման է ստացվում, արաբական զորքը Մուրակա իբն Ամրի գլխավորությամբ շարժվում է դեպի Շիրվան: Երբ արաբները մոտենում են Դերբենդին, նրանց իր հնազանդությունն է հայտնում տեղի ժառանգական տիրակալ Շահրբուրազը՝ պայմանով, որ հարկեր մուծելու փոխարեն այդ գումարները ծախսվեն սահմանները պաշտպանող զինվորների

վարձատրության համար: Պայմանն ընդունվում է, և արաբները ազատվում են այստեղ զորք պահելու անհրաժեշտությունից[4]: Եթե նույնիսկ նշված Շահրբարազը հաստատապես միայն Դերբենդի տիրակալն է, այլ ոչ նաև Շիրվանինը, կարելի է գոնե ենթադրել, որ արաբների կողմից նմանատիպ պայմաններ են առաջարկվել Դերբենդից հարավ Շիրվանի և հարևան մյուս մանր իշխանություններին՝ պահպանելով տեղի ազնվականության իրավունքները այդ տարածքների նկատմամբ, առավել ևս, երբ հայտնի է, որ Այսրկովկասում արաբական տիրապետությունն ընդհուպ մինչև Է դարի վերջը կրել է բավական անկայուն և ժամանակավոր բնույթ[5]:

Հետագա երկու դարերի համար տեղակալն իշխանական տներին վերաբերող տեղեկությունները գրեթե բացակայում են: Շատ ավելի հարուստ է այս տարածքի Թ-ԺԱ դարերի պատմությանը վերաբերող նյութը՝ շնորհիվ «Թարիխ ալ-Բաբի», որը Շիրվանի այդ ժամանակահատվածի պատմության հիմնական աղբյուրն է: Ըստ դրա՝ 861թ. Մութավաքքիլ խալիֆայի սպանությունից հետո ծագած ընդվզումներից օգտվելով՝ Շիրվանում կառավարող Հայսամ իբն Խալիդն իրեն անկախ հռչակեց և հայտնի դարձավ որպես Շիրվանշահ[6]: Նրա եղբայր Յազիդ իբն Ահմադն էլ (որի թոռ Աբու Թահիր Յազիդը 917թ. պիտի տիրանար Շիրվանի գահին) անկախացավ հարևան Լայզանում[7]: Հայսամն ու Յազիդը, որոնք դարձան Շիրվանում Սազյաղյան դինաստիայի հիմնադիրները, 787-788թթ. Արմինիայի և Ատրպատականի ոստիկան նշանակված Յազիդ իբն Մազյաղի թոռներն էին և ծագում էին արաբական *շայբան* ցեղից: Նրանց տոհմաբանության վերաբերյալ աղբյուրի հաղորդած տեղեկությունները հստակ են և կասկածելու տեղիք չեն տալիս[8]:

Ալաբ պատմիչ Սատուդին, որն իր աշխատությունն ավարտել է 943թ., գրում է, որ իր ժամանակ Շիրվանում թագավորող Մուհամմադ իբն Յազիդը ծագում է Սասանյան շահնշահ Բահրամ Գուրից (420-439)[9]: Սակայն մեր կարծիքով՝ պատմիչին հասած այդ տեղեկությունն արդյունք է Շիրվանշահերի վաղ շրջանի դինաստիայի վերաբերյալ դեռ այդ ժամանակ պահպանված հիշողության և կարող է վկայել Ե դարում Սասանյանների և նրանց միջև խնամիական կապերի հաստատման մասին[10]:

Շիրվանի Մազյաղյան դինաստիայի արաբական անունների շարքը շարունակվում է մինչև ԺԱ դարի 20-ական թվականները: Սակայն Յազիդ իբն Ահմադ թագավորի մեզ հայտնի յոթ զավակներից հինգը կրում են իրանական անուններ (Մանուչեհր, Սալար, Անուշիրվան, Քուբադ, Շամքույե)[11]: Ժամանակի ընթացքում մոռացության է մատնվում նաև Սազյաղյանների արաբական ծագման փաստը, և արդեն ԺԲ դարում նրանք հանդես են գալիս նոր՝ *Քեսրանյան* տոհմանվամբ՝ նկատի ունենալով իրենց հին իրանական ծագումը[12]: Հետագա դարերի

պատմիչներն այդեն որևէ կեյպ կասկածի տակ չեն առնում այդ փաստը: Դա նշանակում է. որ դինաստիայի ներսում ձևավորված իրանական մշակութային ավանդույթն արդեն այդ ժամանակներում ամբողջությամբ ստվերել էր արաբական ծագման մասին հիշողությունները:

Դինաստիայում իրանական անվանաբանական ավանդույթի ձևավորումը, որը շարունակական դարձավ հետագա դարերի համար՝ ընդհուպ միչև վերջին թագավորները, ժամանակին պատճառ է դարձել մի՝ ամենայն հավանականությամբ սխալ տեսակետի ձևավորման համար, ըստ որի ինչ-որ ժամանակ Շիրվանում տեղի է ունեցել դինաստիայի վտփոխություն[13], մինչդեռ «Թարիխ ալ-Բաբում» հստակ է երևում ժառանգական ուղիղ կապը[14]: Այսպիսի նոր ինքնության ձևավորումն, անկասկած, կարող է վկայել որևէ իրանական տոհմի հետ Շիրվանշահերի մտերմանալու մասին: Խնդիրը գրավել է նաև այլ հետազոտողների ուշադրությունը: Մասնավորապես, Վ. Մինորսկին հնարավոր է համարել, որ Յազիդ իբն Ահմադի օրոք ամուսնական կապեր են հաստատվել Շաբարանի հին իշխանական տան հետ[15]:

Այս առումով չափազանց արժեքավոր է ԺԲ դարի սկզբում Շիրվանշահերի պետության մեջ տարբեր դիրքեր զբաղեցրած պաշտոնյա Մասուդ իբն Նամդարի բերած մի տեղեկություն: Իր երկերի ժողովածոյում նա մի քանի անգամ հիշատակում է Բահա ադ-Դին ադ-Կակույիի անունը[16]: Նշվում է նաև, որ ապդեն երրորդ սերունդն է, ինչ Կակույիների ընտանիքը զբաղեցնում է Շիրվանի վեզիրի պաշտոնը[17]: Հայտնի է, որ Կակույիների տոհմը հանդիսանում է դելմիկների նշանավոր դինաստիայի՝ Բույիների մի ճյուղավորումը: Ողջ ԺԱ դարի ընթացքում այդ տոհմի ներկայացուցիչներն իշխել են կենտրոնական և արևմտյան Իրանի այնպիսի կարևոր քաղաքներում, ինչպիսիք են Սպահանը, Համադանը, Ռեյը, Նեհավանդը և Յազդը[18]: Շատ հավանական է, որ հենց Կակույիների հետ են Մազյադյան տոհմի Շիրվանշահերն ամուսնական կապեր հաստատել արդեն ԺԱ դարի սկզբում՝ փոխարենը նրանց տալով վեզիրի պաշտոնը, որը դարձավ ժառանգական[19]: Այս տեսակետի օգտին է խոսում նաև այն, որ ԺԱ դարի ընթացքում թե՛ Շիրվանշահերի և թե՛ Կակույիների մոտ տարածված են դառնում Ֆարիբուրգ, Գարշասպ, Քուբադ, Քավուս իրանական անունները, որոնք չեն հանդիպում հարևան մյուս իշխանական տներում: Իսկ Բահա ադ-Դին ալ-Կակույիի պապի ապրած ժամանակն էլ պետք է որ համընկներ Յազիդ իբն Ահմադի գահակալության ժամանակաշրջանին:

Այսպիսով, թեև ԺԲ դարում Շիրվանշահերի տոհմանունը Մազյադյանի փոխարեն հայտնի է դառնում արդեն որպես Քեսրանյան՝ ակնարկելով Խոսրով Անուշիրվանից սերելու մասին, այդուհանդերձ աղբյուրները փաստում են դրանց միջև ուղիղ կապի առկայության մասին: ԺԱ դարի առաջին քառորդից Շիրվանի տիրակալների արաբական

դինաստիայում իրանական անունների ի հայտ գալը որևէ իրանական տոհմի, հավանաբար՝ դելմիկ Կակույիների հետ խնամիական կապի հաստատման արդյունք էր: *Քեսրուանյան* առհմանվան առաջացումը պետք է բացատրել նախ և առաջ դինասստիայի ներկայացուցիչների մոտ իրանական ինքնագիտակցության բարձրացմամբ, ինչպես նաև իրանական մշակութային հզոր միջավայրի առկայությամբ: Մյուս կողմից, ինչպես նկատել է Վ.Մինորսկին, հնարավոր է, որ 1075թ. սելջուկյան արշավանքին հաջորդած մութ ժամանակներում այստեղ ինչ-որ երկիշխանություն հաստատված լիներ, որի հետևանքները վերացնելուց հետո Շիրվանշահերին հարկ կլիներ վերականգնել սեփական հեղինակությունը՝ ասենք, դինաստիային վերագրելով իրանական ազնվական ծագում[20]: Ինչ վերաբերում է Մազյադյանների և վաղ (սասանյան) շրջանի Շիրվանշահերի միջև կապի խնդրին, ապա դրան վերաբերող աղբյուրների տվյալներն ավելի շատ հիմք են տալիս ժխտելու, քան հաստատելու այդպիսի կապը:

ARSEN HAKOBYAN
(IOS)

ON THE ISSUE OF THE SHIRVANSHAHS' DYNASTY'S IRANIZATION IN THE 11TH CENTURY

According to the Armenian and Arabic historical sources, the beginning of the early Shirvanshahs' dynasty can be dated from the Sasanian times when «king» titles were awarded to a number of rulers of the Eastern Transcaucasus. But then up to the 9th century we have no authentic records about the local aristocracy. The «Tarikh al-Bab» gives in details the history of the Mazyadid rulers of Shirvan. The dynasty rises from the arab stem of *al-Shayban* and its representatives had arab names until the first quarter of the 11th century. From that time Iranian names appear in the onomastic tradition of the Mazyadid dynasty. This fact made some researchers to suppose that a dynastical change had taken place in Shirvan. But the «Tarikh al-Bab» shows us that the Mazyadid dynasty went on ruling in the state after that time as well. V.Minorsky supposed that the Mazyadids could establish nobile relations with some old Iranian family, for example, of Shabaran.

Mas'ud ibn Namdar, who served in the Shirvanshahs' state as an administrative official, spreads some light on this issue. He mentions for several times the name of Baha ad-Din al-Kakuyi, who was the Shirvanshahs' vezir in the third generation. So the Kakuyids (a branch of Daylamit dynasty of Buyids) were the family with which the Shirvanshahs had established nobile relations in the beginning of the 11th century.

Though from the 12th century the Shirvanshahs were famous as Kesranids and the Iranian onomastic tradition continued in the dynasty up to its decline, however a dynastical change had not taken place. In reality the change of the dynastic name could mean a change of the self-consciousness of the Shirvanshahs from Arabian into Iranian under the influence of a strong Iranian cultural environment of the region which had strong and deep historical roots.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե.Տէր-Մինասեանի. Եր., 1957, էջ 198; Баладзури, Книга завоеваний стран. Араб. текст, пер. П.К.Жузе, Баку, 1927, с.7-8; Масуди, Мурудж ад-Дзахаб, пер. и комент, Минорского В.Ф, в кн.: История Ширвана и Дербента X-XIвв., М., 1963, с. 190-191: РЩЩп. Акопян А.А. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с.119; Семенов И.Г., Этно-политическая история Восточного Кавказа в III-IV веках, автореф. канд. ист. наук, Махачкала, 2002, с.23-25.
2. Տես Հակոբյան Ա., «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ // «Մերձավոր արևելք», IV, Եր., 2007, էջ 61-65:
3. Минорский В.Ф. История Ширвана и Дербента X-XIвв., М., 1963, с.176; Ашурбейли С. Государство Ширваншахов (VI-XVIвв.), Баку, 1983, с.43.
4. Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին. Տաբարի (V, 2663, 2665): Թարգմ. Ք.Խալաթեանց//«Հանդէս ամսօրեայ». ԺԹ տարի. Վիեննա, 1905, էջ 160, 244:
5. Тер-Гевондян А.Н. Армения и Арабский халифат, Ер., 1977, с. 44-45, с.50, 71.
6. Минорский В.Ф., նշվ. աշխ., էջ 47:
7. Նույն տեղում, էջ 48; Լայգանը համապատասխանում է Շամախու շրջակայքից արևմուտք՝ Գիրդիմանչայ և Ախսու գետերի վերին հովիտների տարածքին (Ա.Հ.):
8. Минорский В.Ф., նշվ. աշխ., էջ 43-47, 84:
9. Масуди, նշվ. աշխ., էջ 190-191:
10. Նմանատիպ խնամիական կապերի մասին տես օրինակ՝ Յակոբեան Ա., «Վասչագանի վէպը» և Արշակունեաց թագավորութեան խնդիրը Դ–Զ դարերի Աղուանքում// «Հանդէս ամսօրեայ», ՃԺԷ տարի, Վիեննա-Երևան, 2003, էջ 93-94, 130-131:
11. Минорский В.Ф., նշվ. աշխ., էջ 53-56:
12. Նույն տեղում, էջ 169, 176-177; Արաբապարսկական ավանդույթում Քիսրա անվամբ հանդես է գալիս Խոսրով Անուշիրվանը (Ա.Հ.):
13. Տես История Азербайджана в 3-х томах, под. ред. И.А.Гусейнова, А.С.Сумбатзаде, А.Н.Гулиева, Е.А.Токаржевского, Баку, 1958, с.128-129, 141.
14. Минорский В.Ф., նշվ. աշխ., էջ 52-53:
15. Նույն տեղում, էջ 90,157:
16. Мас'уд ибн Намдар. Сборник рассказов, писем и стихов. Факс. текста, предисл. и указатели Бейлиса В.М., М., 1970, лл. 9а, 11б, 13а, 36б, 155б, 157б, 159а; V.Minorsky, Cl.Cahen, Le Recueil Transcaucasien de Mas'ud b. Namdar// Journal Asiatic. t. CCXXXVII, 1949, p. 115.
17. Мас'уд ибн Намдар, 13а, 159а; Бейлис В.М., Сочинения Мас'уда ибн Намдара как источник по истории Аррана и Ширвана начала XIIв. И памятник арабской литературы, автореф. дисс. докт. ист. наук, Баку, с.42-43.
18. Bosworth, C.E. The Islamic Dynasties. A Chronological and Geneological Handbook, Edinburgh University Press, 1967, pp. 97-98; Ահմադ-ե Քյասրավի, Շահրիյարան-ե գոմնամ, Թեհրան, 1385, էջ 12 (պարսկ.):
19. Հմմտ. Бейлис В.М., նշվ. աշխ., էջ 42:
20. Минорский В.Ф., նշվ. աշխ., էջ 176: